



«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Non-governmental organization "Armenian Lawyers' Association"
Общественная организация "Армянская ассоциация юристов"

ՀՀ, ք. Երևան 0010, Լալբանդյան 7 գրասենյակ 2
7 Nalbandyan Str. Suite 2, Yerevan 0010, RA
РА, Ереван 0010, ул. Налбандяна 7, офис 2

☎ (+ 374 10) 540199

✉ info@armia.am

№ 02/06
Ձ.Տ. Ջեյբաբյան 2018 թ.

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Արայիկ Հարությունյանին

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ նախագահ
Կարեն Զաղոյանից

Լալբանդյան 7, գրասենյակ 2, 0010 Երևան, ՀՀ, 010 54 01 99, info@armia.am
(բնակության վայր. հեռախոսի համար, էլ փոստի հասցե)

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն, 03Ա 057970
(կազմակերպության լրիվ անվանումը, պետ. գրանցման համարը)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.


1. Կազմակերպության կանոնադրության պետական գրանցման համարը,
2. Անփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ,
3. Մոտիվացիոն նամակ հասարակական խորհրդում կազմակերպության ներգրավման աշխատանքների մասնակցության վերաբերյալ,
4. Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ:

Դիմող՝

Կարեն Զաղոյան

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ նախագահ

25 մայիսի 2018 թ.



ՎԿԱՑԱԿԱՆ


03 Ա 057970

Խրախառնակալի անձի պետական գրանցման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԽՐԱԽԱՍՏՆԵՐԻ ԱՍՑԻԱՑԻԱ,
(անվանումը)
Հաստատվել է ան կազմակերպության կողմից

Գրանցված է պետական ռեգիստրի **ՎԱՐՉՈՒԹՅԱՆ** կողմից
(արդարագրամանակ անվանումը)
Գրանցման համարը **211.171.01501**
Գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը **27.12.2002թ.**
Իրավաբանական անձի ծածկագիրը (կոդը) **39066894**
Իրավաբանական անձի տեսակը **Հոչ տեխնոլոգիաներ**
Գործունեության ժամկետը սիմվոլ **անժամկետ**

Վկայական ուժի մեջ է մտնում հետևյալից իսկ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
Ալեքսան
(ստորագրություն)
Կ. Ս. **0** ղեկ տեսքերի 200 **2** ր.



ՆԵՐՂԻՐ 001

Խրախառնակալի անձի պետական գրանցման վկայականը

Վկայական **03Ա-057970**

Անվանումը, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԽՐԱԽԱՍՏՆԵՐԻ

Ասոցիացիա, Հաստատվել է ան կազմակերպության կողմից


Գրանցվելու վայրը (մասնցած) **ՅՐԵՎԱՆ, Բ. ԵՐԿԱՆ**

Նախատեսված է **ՎՊՈՒՅՆ ԿՈՏԵՆՆԵՐ**

Այլ տեղեկություններ նախագահ **ՋՈՂՈՑԻՆ ԿՈՒՄԻՏԵ**

Անձ. ԱՅ 0269299 տղվ. 18.04.98թ. 006 կառավար

Յ.Ն. ՎԱՅՈՐԻ Բ. ԵՐԿԱՆ, Թաղապետական 68, Բ.Ն. 79
Գրանցված է ՀՀ կառավարության 2001 թ. 4-րդ ապրիլի 4-ի N 601 որոշմամբ
ԿՐԼԵԳԻՍԻ 14.08.95թ. 12/2-2 որոշմամբ, անվանումը
18.12.99թ. թիվ 2091 հրամանով, որպես Հ. Երկաճ
Իրավաբանական անձի կազմակերպության, ՀՀ
Ներքին ուժի մեջ է մտնում հետևյալից իսկ



ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

Ալեքսան
(ստորագրություն)

Կ. Ս. **0** ղեկ տեսքերի 200 **2** ր.

ՎԿԱՅԱԿԱՆ

03 Ա 057970

իրավաբանական անձի պետական գրանցման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՏԱՍԻՐԻ ԻՐԱՎԱՐԱՆՍՆԵՐԻ ԱՍՈՒՊԻԱՏՅՈՒՆ
(անվտանգ)

Հաստատված է Կազմակերպության

Գրանցված է պետական ռեգիստրի **ՎԱՐՉՈՒՅՑԱՆ** կայանից
(տիրաբաժանման անվանումը)

Գրանցման իսմարկը **211.171.01501**

Գրանցման տարին, ամիսը և ամսաթիվը **27.12.2002թ.**

Իրավաբանական անձի ծածկագիրը (վրդը) **39066894**

Իրավաբանական անձի տեսակը **Հոչ առևտրային**

Գործունեության ժամկետը մինչև **անժամկետ**

Վկայական ուժի մեջ է մտնում մեղորդի ենա



ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

Ալեքսանյան
(տիրաբաժանող)

Կ. Տ. 0 ղեկավարելի էրի 2002 թ.

ՆԵՐՈՒՐ 002

Իրավաբանական անձի պետական գրանցման
N 03Ա057970 վկայականի

Իրավաբանական անձի անվանումը **ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԵՐԿՏԱՍԻՐԻ ԻՐԱՎԱՐԱՆՍՆԵՐԻ ԱՍՈՒՊԻԱՏՅՈՒՆ
ՀԱՍՏԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Ֆունկցիոն վայրը _____

Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարը
Նախագահ՝ Կարեն Զախոյան

անձնագիր **AK0551653**, տրվ. **2010-07-08, 004** կողմից,
հասցե **Քաղաքային 58-73 / Զ. Երևան 0019 Հայաստան**

Իրավաբանական անձի իրավաբանախորհի անվանումը և
գրանցման իսմարկը _____

Այլ տեղեկություններ **Նախագահի անձնագրային տվյալների
փոփոխություն:**

Փոփոխություն(ներ)ը գրանցվել է(են) 2012-04-26-ին

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ



Ալեքսանյան
(տիրաբաժանող)

26.04.2012 թ.

ՆԵՐՇԻՐ 003

Իրավաբանական անձի պետական գրանցման
N 03U.057970 վկայականի
իրավաբանական անձի պետական «ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ
ՀԱՏԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՏԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՐԱՑԻՆ

Հանգեցու վայրը

Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար

Իրավաբանական անձի իրավաստիարոյի անվանումը և
գրանցման համարը

Այլ տեղեկություններ որ խմբագրությանը կատարողության
(անվանափոխության) պետական գրանցում:

Փոփոխություն(ներ)ը գրանցվել է(են) 2016-02-15-ին



ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

15.02.2016 թ.

Իրավաբանական անձի մասին վկայականի հետ միասին

Անփութի տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն 2016-18թթ.-ին իրականացրել է հետևյալ ծրագրերը՝ «Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոց» (2018, իրականացվել է նաև 2015 թ.), «Եվրոպական Կամավորական Ծառայություն» (ԵԿՕ) (2017-2018), «Կառուցողական երկխոսության հանձնառություն» (2016-2019), «Փաստերի վրա հիմնված բարեփոխումների ջատագովություն» (2016), «Հանրային վերահսկողության և կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման մեխանիզմների ուժեղացումը սննդի անվտանգության ոլորտում» (2016), «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» (2014-2016):

«Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոց» և «Եվրոպական Կամավորական Ծառայություն» (ԵԿՕ) ծրագրերը մասնավորապես ուղղված են ոչ ֆորմալ կրթությանը:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի հիմնական նպատակը ՔՀԿ-ների ազդեցության ուժեղացումն է հանրային քաղաքականությունների գործընթացի վրա, իսկ առանձին նպատակներն են ՔՀԿ-ների կարողությունների ուժեղացումը կոալիցիաների կառուցման գործում և քաղաքականությունների շուրջ կառուցողական ու ռազմավարական փոխգործակցությունը կենտրոնական իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների գործընկերների հետ: Ծրագրի 9 թիրախ ոլորտներից մեկը *կրթությունն* է, իսկ մյուսները՝ հանրային ֆինանսների կառավարում, մարդու իրավունքներ, արդարադատություն, բիզնես, գյուղատնտեսություն, տնտեսություն, էներգետիկա և սոցիալական ոլորտ՝ հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառում: Հարկ է նշել, որ այս ծրագրի շրջանակներում մենք դրամաշնորհներ ենք տրամադրում ՔՀԿ-ներին և ՔՀԿ-ների կոալիցիաներին կրթության և, մասնավորապես, սոցիալական ձեռնարկատիրության կրթության ոլորտներում:

«Փաստերի վրա հիմնված բարեփոխումների ջատագովություն» ծրագրի շրջանակներում ստեղծվել է «Բիզպաշտպան» կայքը (<https://bizprotect.am/am>), որտեղ տնտեսվարողներին հնարավորություն է տրվում անանուն կերպով ներկայացնել իրենց բողոք-հայտերը, որոնք մասնագետների կողմից ուղղվում են համապատասխան պետական մարմիններին լուծման համար: Ծրագրի շրջանակներում նաև պետությանը ներկայացվեցին մի շարք առաջարկներ բիզնես միջավայրի բարելավման ուղղությամբ:

«Հանրային վերահսկողության և կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման մեխանիզմների ուժեղացումը սննդի անվտանգության ոլորտում» ծրագրի շրջանակներում լուսարանվել է սննդի անվտանգության ոլորտում հանրային ծառայություններ մատուցող պետական մարմինների և այլ կազմակերպությունների (անձանց) գործունեությունը և լրագրողական հետաքննությունները, վեր են հանվել առկա խնդիրներն ու կոռուպցիոն ռիսկերը՝ ապահովելով թափանցիկություն և հասարակության տեղեկացվածությունը, ինչպես նաև իրավաբան-փորձագետի կողմից «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության մասին» ՀՀ օրենքի նախագծի ուսումնասիրման և միջազգային լավագույն ստանդարտներին համապատասխանեցման միջոցով կազմվել է զեկույց կոռուպցիոն ռիսկերի չեզոքացման շեշտադրմամբ:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվել էր Եվրոպական միության և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից, Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից գրանցվել են հետևյալ հաջողությունները.

- 2014 թ.-ին ծրագրի շրջանակներում հիմնադրվեց Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան, որը ներկայումս բաղկացած է 96 քաղաքացիական հասարակության կազմակերպությունից ինչպես Երևանից, այնպես էլ ՀՀ տարբեր մարզերից: Ծրագրի շրջանակներում գրանցված հաջողություններից մեկը ՀՀ վարչապետի Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդում ՔՀԿ-ներին հատկացված 2 տեղի մեծացումներ՝ դարձնելով 5 տեղ:
- 2016թ. դեկտեմբերի 16-ին ԱԺ-ն միաձայն կողմ քվեարկեց **ապօրինի հարստացում** քրեականացնող նախագծին և 2017թ. հուլիսի 1-ից նորմը ուժի մեջ մտավ:
- 2016թ. դեկտեմբերի 16-ին ընդունվեց «Գնումների մասին» նոր օրենքը, որը ներառում է **«իրական սեփականատերերի»** վերաբերյալ նորմ:
- 2017թ. հունիսի 28-ին ԱԺ-ն միաձայն կողմ քվեարկեց **«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին»**, **«Ազդարարման համակարգի մասին»** և հարակից օրենքների նախագծերին:
- ՀՀ կառավարությանը **բիզնես ոլորտում 117 առաջարկությունների** ներկայացում, որոնց մեծ մասն արդեն ընդունվել է:

Մոտիվացիոն նամակ

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն, մասնագիտացած լինելով հակակոռուպցիոն, մարդու իրավունքների և բիզնեսի ոլորտներում մի շարք ոլորտային հանրային քաղաքականությունների մշակման մեջ, համագործակցել է ԿԳՆ հետ՝ կազմակերպելով միջոցառումներ ԿԳՆ ներկայացուցիչների մասնակցությամբ, որոնց վերաբերյալ ամփոփ առաջարկները ներկայացվել են ԿԳՆ և քննարկվել ԿԳՆ-ում՝ ՀԿ-ների մասնակցությամբ:

Իրավաբանների հայկական ասոցիացիան նաև ներգրավված է եղել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ստեղծված ad hoc աշխատանքային խմբում, որը միտված է եղել հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացմանը, այդ թվում՝ 2015-2018թթ. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության կրթության ոլորտում միջոցառումների ծրագրի մշակմանը և դրա իրականացմանը:

Նշենք նաև, որ Իրավաբանների հայկական ասոցիացիան ՀՀ 2015-2018թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության վերաբերյալ ներկայացրել է առաջարկներ, որոնք ընդգրկվել են մասնավորապես կրթության ոլորտի հակակոռուպցիոն միջոցառումների միջոցառումների ծրագրում:

Հարկ է նշել, որ այս ծրագրի շրջանակներում մենք դրամաշնորհներ ենք տրամադրում ՔՀԿ-ներին և ՔՀԿ-ների կոալիցիաներին կրթության և, մասնավորապես, սոցիալական ձեռնարկատիրության կրթության ոլորտներում:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև մեր աշխատելու պատրաստակամությունն ու բանիմացությունը կրթության ոլորտում՝ խնդրում ենք ընդգրկել «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն ԿԳՆ-ը կից հասարակական խորհրդի կազմում:

Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը անցած երեք տարիների ընթացքում նախաձեռնել է աշխատանքներ, որոնք միտված են ինչպես ընթացիկ խնդիրների լուծմանը, այնպես էլ ռազմավարական նպատակների իրականացմանը, ոլորտում կոռուպցիոն ռիսկերի վերացմանը: Այսպես, կրթության ոլորտի զարգացման հետագա ուղղությունները նախանշելու նպատակով ԿԳՆ-ն ՀՀ կառավարություն է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման մինչև 2030 թվականի պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Բացի այդ, ՀՀ ԿԳՆ-ն իրականացրել է հետևյալ աշխատանքները:

Ընդլայնվել է «Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագիրը. 2017 թվականին ծրագրում ներառվել է ՀՀ Տավուշի մարզը: Ծրագրի շրջանակներում դպրոցական սնունդ է ստանում շուրջ 30 հազար սովորող: Միաժամանակ շարունակվել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից իրականացվող դպրոցական սննդի ծրագիրը, որում Լոռու, Շիրակի, Արագածոտնի, Կոտայքի, Գեղարունիքի և Արմավիրի մարզերում ընդգրկված է շուրջ 60 հազար սովորող:

Համընդհանուր ներառական կրթությանը անցում կատարելու շրջանակում ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի» համաձայն՝ 2017 թվականին ընդլայնվել է համընդհանուր ներառական կրթության համակարգը՝ ընդգրկելով նաև ՀՀ Լոռու և Տավուշի մարզերը: Իրականացվել են վերապատրաստումներ ներառական կրթության, երեխաների գնահատման գործիքակազմի և մանկավարժա-հոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգի վերաբերյալ, հանրակրթական դպրոցներում ներդրվել է ուսուցչի օգնականի հաստիքը: Այժմ արդեն համընդհանուր ներառական կրթության համակարգը գործում է Սյունիքի, Լոռու և Տավուշի մարզերում:

Ուսումնական հաստատությունների բյուջեների և ծախսերի հանրային հասանելիության ապահովման նպատակով հանրապետության բոլոր դպրոցների համար ստեղծվել են անհատական կայքեր: «Դպրոցական կայքեր» անվանմամբ <http://schools.am/> միջավայրում առանձին էջերով տեղադրված են ուսումնական հաստատությունների կայքերի հղումների ցանկերը:

13 դպրոցներում ներդրվել է փորձական ծրագիր՝ «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Ես և շրջակա աշխարհը» և «Հասարակագիտություն» առարկաների ուսուցում՝ ֆինանսական կրթության տարրերի ներառմամբ: ՀՀ կրթության և

գիտության նախարարի հրամանով հաստատվել են նշված առարկաների փորձնական ծրագրերը: Վերապատրաստվել է 13 դպրոցների 46 ուսուցիչ: Փորձնական ծրագրում ընդգրկված է շուրջ 1600 սովորող:

«Արմաթ» ինժեներական լաբորատորիաներ են բացվել 67 հանրակրթական ուսումնական հաստատություններում: Համանուն ծրագրի խմբակներում ըդգրկված է 208 հանրակրթական ուսումնական հաստատություն, շուրջ 4700 սովորող:

2017-2018 ուստարում «Ազգային երգ ու պար» առարկան իրականացվում է հանրակրթական 233 դպրոցներում:

ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի և Եվրոպական միության «Yes» ծրագրի փորձագետի կողմից մշակվել է «Ուսուցիչ» ծրագիրը, որն իր մեջ ներառում է ուսուցիչների վերապատրաստման, ատեստավորման և մասնագիտական առաջխաղացման մեխանիզմները: Նշված ծրագրի հիման վրա ներկայումս մշակվում է ուսուցիչների պատրաստման, զարգացման և մասնագիտական առաջընթացի արդյունավետ համակարգը:

Հանրակրթական դպրոցների օպտիմալացման շրջանակներում վերակազմակերպվել է թվով 13 դպրոց:

Անցկացվել են դպրոցականների հանրապետական օլիմպիադաներ հանրակրթական 16 առարկայից:

Ներդրվել է «Նախնական զինվորական պատրաստության» առարկայի ավագ դպրոցի 12-րդ դասարանի ծրագիրը: Նախնական զինվորական պատրաստություն առարկայի դասավանդումն սովելի մատչելի դարձնելու նպատակով տպագրվել են թվով 37 338 հազար հատ ռազմագիտական ուսումնադիդակտիկ ցուցապաստառներ և բաժանվել են ուսումնական հաստություններին: Կազմակերպվել է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի օլիմպիադան, որին մասնակցել են ՀՀ բոլոր մարզերի և ԼՂՀ թիմերը, թվով 12 թիմ:

Մշակվել և հանրային քննարկման է ներկայացվել Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության հայեցակարգը:

Կազմակերպվել են ՀՀ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների միջև անցկացվող «Կորյուն» ռազմամարզական խաղերը, որոնց մասնակցում են ՀՀ բոլոր մարզերը, Երևան քաղաքը և Արցախի Հանրապետության՝ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների սովորողները:

2017 թվականին Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, Գեղագիտության ազգային կենտրոնի հետ համատեղ, արդեն յոթերորդ անգամ նախաձեռնել և իրականացրել է համահայկական նկարչական 7-րդ

մրցույթ-փառատոնը՝ նվիրված ազգային տոներին: Մրցույթ-փառատոնի առաջին փուլում ներկայացվել է Հայաստանի, ԼՂՀ-ի և Սփյուռքի 15 երկրների 145 հաստատության շուրջ 1320 աշխատանք: Ցուցահանդեսի համար ընտրվել է շուրջ 170 աշխատանք:

Կազմակերպվել են ՀՀ Անկախության 26-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական մարզական խաղերը: Ծրագրում ընդգրկվել է 9 մարզաձև: Հանրապետական մարզական խաղերի 4 փուլերին (համայնքային, մարզային, միջմարզային և հանրապետական եզրափակիչ) մասնակից են դարձել շուրջ 55.000 դպրոցականներ: Եզրափակիչ փուլին մասնակցել են թվով 1026 դպրոցականներ:

Մշակվել է «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման 2017-2021 թվականների բարեփոխումների ծրագրի» նախագիծը:

Վերամշակվել է ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերության հայեցակարգը:

Համաձայն Հանրապետության և Եվրոպական միության միջև ստորագրված «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» համաձայնագրի՝ մշակվել և վերանայվել են գյուղատնտեսական և գյուղատնտեսությանն առնչվող 29 պետական կրթական չափորոշիչներ և մոդուլային ծրագրեր: Իրականացվել է չափորոշիչներ մշակող մասնագետների վերապատրաստում:

ՀՀ-ում գործող թվով 95 ՆՄԿՈՒ ուսումնական հաստատություններից 75-ում արդեն իսկ ներդրվել են կարիերայի կենտրոններ, ընտրվել են վերոնշյալ 75 ուսումնական հաստատությունների կարիերայի կենտրոնների համար պատասխանատուներ, իրականացվել են 75 ուսումնական հաստատությունների կարիերայի պատասխանատուների վերապատրաստումներ և իրազեկման սեմինարներ:

ՀՀ կրթության և գիտության նախարարության և Ավստրիական զարգացման գործակալության միջև «Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնության» շրջանակներում մշակվել է «Օրգանական գյուղատնտեսության սկզբունքները» ուսումնական մոդուլը, ինչպես նաև Մոդուլի ուսումնական ծրագիրը ներկայացնող ուսուցչի ձեռնարկ:

«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ն շվեյցարական գործընկերներ HEKS/EPER (Շվեյցարիայի եկեղեցու օգնության) և Կիրառական գիտությունների Բեռնի համալսարանի գյուղատնտեսության, անոտոմային և

պարենային գիտությունների դպրոց (HAFL) կազմակերպությունների հետ համատեղ նախաձեռնել է գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) բնագավառում «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացում Սյունիքի մարզում» խորագրով ծրագիրը: Ծրագիրը մեկնարկել է 2016 թվականին և կավարտվի 2020 թվականին:

ՀՀ կրթության և գիտության նախարարության և Եվրոպական կրթական հիմնադրամի համագործակցության շրջանակներում մեկնարկել է Եվրոպական կրթական հիմնադրամի Skills Connexion տարածաշրջանային ծրագրի՝ աշխատանքի վրա հիմնված ուսուցմանն առնչվող ենթածրագիրը, որը կնպաստի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրերի մասնագիտական զարգացմանը:

Մեկնարկել է Աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO) կողմից համակարգվող «Մեծ Քսանյակի (G20) կադրերի մասնագիտական պատրաստման ռազմավարության կիրառումը. ԱՄԿ-ի և Ռուսաստանի Դաշնության գործընկերություն» ԱՄԿ ծրագիրը (2016-2019թթ.): Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՄԿՈւ ոլորտի կառավարման համակարգի բարելավում, միջազգային ստանդարտների համապատասխանեցում G20 ծրագրին, մարդկային ռեսուրսների զարգացում, աշխատատեղերի կանխատեսում, կարիերայի կողմնորոշում և այլն:

Կազմակերպվել են բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններով ամփոփիչ ատեստավորման քննություններ, որի արդյունքում ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների 172 (որից 2-ը՝ մագիստրոսի կրթական ծրագրով) շրջանավարտներից ամփոփիչ ատեստավորման քննությունները դրական գնահատականներով հանձնել են 130-ը (75.6%), որից 2-ը՝ մագիստրոս: Դրական գնահատականներով հանձնած շրջանավարտների ոչ պետական նմուշի նախկին դիպլոմը փոխարինվել է համապատասխան մասնագիտության և որակավորման բակալավրի ու մագիստրոսի պետական նմուշի դիպլոմով:

«Բարձրագույն կրթության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը լրամշակվել և 2018 թվականի փետրվարի 8-ին ներկայացվել է ՀՀ Ազգային Ժողովի քննարկմանը:

Կարևորելով ապրիլյան պատերազմի մասնակիցների ընտանիքների սոցիալական բեռի թեթևացման անհրաժեշտությունը՝ ՀՀ բուհերի ռեկտորներին առաջարկվել է քննարկել և ուսանողների զինվորական գրքույկում համապատասխան նշման առկայության պարագայում մինչև ուսումնառության ավարտը ապրիլյան պատերազմի մասնակից ուսանողների համար կատարել ուսման վարձի առավելագույն զեղչ՝ 50 տոկոս և ավելի՝ առանց հաշվի առնելու ուսանողի միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը:

2016թ. սեպտեմբերից առ այսօր օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու նպատակով միջպետական համաձայնագրերի շրջանակներում ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից գործուղվել է շուրջ 440 ՀՀ քաղաքացի: ՀՀ ուսումնական հաստատություններ ընդունվել է շուրջ 2500 օտարերկրյա քաղաքացի՝ 42 պետություններից:

Օտարերկրյա պետությունների հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծրագրի շրջանակներում Հայաստանում վերապատրաստվել է շուրջ 120 ուսուցիչ՝ 21 երկրից: Վերապատրաստումը կազմակերպվում է Սփյուռքի բոլոր տեսակի ուսումնական հաստատություններում «հայոց լեզու և գրականություն» ու հայագիտական այլ առարկաներ դասավանդող ուսուցիչների, լրացուցիչ կրթության ոլորտում աշխատանք իրականացնող մանկավարժների և սփյուռքում կրթական գործի կազմակերպման պատասխանատուների համար:

ՀՀ պետական բյուջեի միջոցներով անցկացվել է Համահայկական մանկապատանեկան նկարչական մրցույթ-փառատոնը, որին յուրաքանչյուր տարի մասնակցում են շուրջ 1500 երեխաներ՝ Հայաստանի Արցախի և Սփյուռքի ավելի քան 150 հաստատություններից:

Բացի այդ, ՀՀ ԿԳՆ-ն ակտիվորեն ներգրավված է եղել ՀՀ Հակակոռուպցիոն խորհրդի անկախ փորձագետի կողմից մշակված և ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ 2015-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարության կրթության ոլորտի հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի քննարկման աշխատանքներին և ներկայումս ձեռնամուխ է եղել ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացմանը: